Զեկուցագիր

Մասիս քաղաքային համայնքի 2018 թ. վարչական և ֆոնդային բյուջեներում փոփոխություններ կատարելու մասին

Քաղաքապետարանի ապարատի 2018թ. պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված ջրի ծախսը ջրաչափերի ցուցմունքների ճշգրտման հետևանքով չի բավականացնում վճարելու փաստացի կատարված ծախսերը: Անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ հատկացնել 70,0 հազար դրամ:

Գանձապետական ծրագրում կատարված փոփոխությունների հետևանքով անհրաժեշտություն է առաջացել 2018թ. բյուջեում նախատեսված ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման համար նախատեսված միջոցները 2580,0 հազար դրամ և ուսանողական տրանսպորտի վարձակալության, վարորդի պայմանագրային ծառայության վճարները 320,0 հազար դրամ տեղափոխել համապատասխան հոդվածներ:

2019թ. կապիտալ աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ պատվիրելու համար անհրաժեշտ է՝

1. Մասիս Կայարան թաղամասի թիվ 12 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգման համար՝ 180,2 հազ. դրամ:

2. Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 14 և 18 շենքերի բակի բարեկարգման համար՝ 244,4 հազ. դրամ:

3. Մասիս քաղաքի Հերացի և Արարատյան փողոցների խաչմերուկից-Մարմարաշեն տանող փողոցի սկզբնամասի, Մասիս քաղաքի 5-10-րդ փողոցների աջ և ձախ մուտքերի սկզբնամասերի լուսավորության ցանցի կառուցման համար՝ 1000.0 հազ. դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան